«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ
"Union of Informed Citizens" Consulting NGO
ք. Երևան 0038, Աբելյան 6/1, 411Ա
+374 (0) 11 355042
6/1 Abelyan street, 411A, Yerevan 0038
https://uic.am/, info@uic.am

Ելից Հ-2820
29 մայիսի, 2024թ.

ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին
ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 5
info@prosecutor.am

ՀԱՂՈՐԴՈՒՄ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՄԻՆ

Հարգարժա՛ն տիկին Վարդապետյան,

Համացանցում 2024թ. մայիսի 27-ին հրապարակվել է տեսանյութ[1], որտեղից ակնհայտ է դառնում իրավապահների կողմից ոչ իրավաչափ գործողություններ թույլ տալը: Մասնավորապես, տեսագրված արարքի օբյեկտիվ կողմն առերևույթ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածով նախատեսված խուլիգանության հանցակազմի հատկանիշներին, և կարող ենք տալ նախնական իրավական գնահատական՝ տեղի է ունեցել հանցագործություն նշված հանցակազմով: Քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով նախատեսված ապացուցման ենթակա հանգամանքները կարող են հաստատվել կամ հերքվել միայն նախաձեռնված վարույթի շրջանակներում՝ կիրառելով քրեադատավարական ամբողջ գործիքակազմը: Կարծում ենք, որ հրապարակման մեջ առկա տեղեկատվությունն ինքնին բավարար է քրեական վարույթ նախաձեռնելու համար:

Վերը բերված գործողությունների վերաբերյալ վերջնական իրավական գնահատական կարող է տրվել պատշաճ իրավական գործընթացի շրջանակներում:

Հաշվի առնելով ներկայացված փաստական հանգամանքները և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ և 175-րդ հոդվածները՝

խնդրում ենք

ներկայացված փաստերի առթիվ նախաձեռնել քրեական վարույթ, ինչպես նաև սույն հարցով Ձեր կողմից ձեռնարկված միջոցառումների ու կայացված որոշումների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել նաև «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպությանը:

Հարգանոք՝
Ծրագրերի համակարգող **Դանիել Իոաննիսյան**

[1] Ծեծուջարդ՝ ՀՅԴ գրասենյակի մոտ. բերետները փորձում են ներխուժել
https://www.youtube.com/watch?v=pOQOKJMQGs0